ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 2. Օրենքում օգտագործվող հասկացությունները**

~~**պետական լիազոր մարմին՝** Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ կառավարություն) կողմից մտավոր սեփականության հարցերով լիազորված գործադիր իշխանության հանրապետական մարմին, որը սույն օրենքի և իր կանոնադրության համաձայն, իրականացնում է ապրանքային նշաններին պահպանություն տրամադրելու հետ կապված գործառույթները.~~

**պետական լիազոր մարմին՝** մտավոր սեփականության բնագավառի օրենքով լիազորված պետական կառավարման համակարգի մարմին, որի մտավոր սեփականության պահպանության հետ կապված, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված այլ գործառույթները, սույն օրենքով նախատեսված կարգով իրականացնում է այդ մարմնի մտավոր սեփականության գրասենյակը: